Հաստատում եմ 30.08.2022թ

Տնօրեն՝ /Մ. Հովակիմյան/

<<ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Չարենցի անվան
N 12 հիմնական դպրոց >>ՊՈԱԿ

2022-2023 ուստարի

# Ուսումնական աշխատանքների գծով
# տնօրենի տեղակալ Լ.Պողոսյանի
# 2022-2023 ուսումնական տարվա
# կատարելիք աշխատանքների

# Պլան

| | Կատարելիք աշխատանքը | Ժամկետը | Կատարող անձ |
|---|---|---|---|
| 1 | Ուսումնասիրել ՀՀ գիտության և կրթության նախարարության որոշումները, հրամանները, այլ փաստաթղթեր ուսումնական հաստատությունների մասին (օգոստ.սեմինարներ, տեղեկագիր, armedu.am կայք և այլն): | Օգոստոս Ուս.տարվա ընթացքում | Ուսումնական աշխատանքներ ի գծով տնօրենի տեղակալ |
| 2 | ՈՒսուցիչների աշխատաժամանակի նորմավորում՝ելնելով նրանց շաբաթական ժամաքանակի ծանրաբեռնվածությունից, ըստ կողմնորոշիչ աղյուսակի ու դասացուցակի ընձեռած հնարավորության:<br>Բացակա ուսուցիչների հաշվառում, բաց թողնված և փոխարինած դասաժամերի արձանագրում և ժամավճարային հաշվարկների ներկայացում:<br>Կատարել հսկողություն ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարման նկատմամբ: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 3 | Ուսումնասիրել ծրագրերի և դասագրքերի փոփոխությունները: Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական ուղեցույցներով: | Օգոստոս Սեպտեմբեր | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 4 | 1 Կազմակերպել ուսումնական պարապմունքների դասացուցակը ՝ հաշվի առնելով ուսուցանվող առարկաների բարդության աստիճանը և ներկայացնել տնօրենի հաստատման:<br>2 Դասաբաշխումը, ուսպլանը մուտքագրել ԴԿՏՀ համակարգ,համակարգել Էլ. մատյանների | Օգոստոս Սեպտեմբեր Դեկտեմբեր | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |

| | | | |
|---|---|---|---|
| | աշխատանքը:: | | |
| 5 | 1Առարկայական մասնախմբերի ղեկավարների հետ անցկացնել հատուկ նիստ՝ նոր կրթակարգին համապատասխան ուսումնական ծրագրերում կատարված փոփոխությունների վերաբերյալ:<br><br>2 Ստուգել ուսուցիչների թեմատիկ պլանները՝հիմք ընդունելով առարկայական մասնախմբերի որոշումները:Ստուգել առարկայական մասնախմբերի աշխատանքային պլանները և ներկայացնել տնօրենի հաստատմանը:, | 29-30.082022<br>Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 6 | Իրականացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների դպրոցական մակարդակի գնահատման վերահսկողություն՝ հիմք ընդունելով բազմամասնագիտական թիմի, դասղեկների և դասավանդող ուսուցիչների առաջարկությունները:<br>Իրականացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառությունը յուրաքանչյուրի համար մշակված անհատական ուսուցման պլանի (ԱՈՒՊ) համաձայն :<br>Պատասխանատու լինել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատականուսուցման պլանի լրացման, մշակման և իրականացման գործընթացի համար:<br>Վերահսկել տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի (ՏՄԱԿ) կողմից գնահատված և վկայագրված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար համապատասխան մանկավարժահոգեբանական ծառայությունների | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |

| | | | |
|---|---|---|---|
| | կազմակերպման որակը: | | |
| 7 | 1.Պարբերաբար ստուգել ուսումնական ծրագրերի իրականացումը, ստուգել ծրագրերի կատարումը ուսուցիչների կողմից, կատարել արդյունքների վերլուծություն:<br>2.Ստուգել օրվա դասի պլանները,կազմակերպել տվյալ օրվա ուսումնական գործընթացը:<br>3.Պարբերաբար վերահսկել էլեկտրոնային մատենավարությունը:<br>4.Կատարել ուսուցիչների ամենօրյա բացակայությունների հաշվառում: Սահմանել վերահսկողություն ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 8 | Իրականացնել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների մեթոդական ղեկավարումը, ապահովել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի և տարածքային կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը: Տանել աշխատանք դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման ուղղությամբ: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 9 | Իրականացնել ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի հսկողություն, կանոնակարգել սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 10 | 1.Պարբերաբար ստուգել դասավանդման որակը, աշակերտների իմացության մակարդակը:<br>2.Կատարել առարկայական ուսումնասիրություններ, արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերի նիստերում, տնօրենության | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |

| | | | |
|---|---|---|---|
| | խորհրդակցություններում, մանկավարժական խորհրդում կամ կոլեկտիվի ժողովում:<br>3.Տանել աշխատանք,որպեսզի աշակերտները բոլոր առարկաներից ձեռք բերեն կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողունակությունների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակը:<br>4.Ընթերցանության որակի բարելավման նպատակով տարրական և միջին օղակներում պարբերաբար կազմակերպել ընթերցանության ստուգումներ՝ հատուկ ընթացակարգով: | | |
| 11 | Աշխատանք տանել գնահատման համակարգի ճիշտ կիրառման ուղղությամբ: Կարևորել ընթացիկ գնահատման և՛ միավորային , և՛ ուսուցանող գնահատումը: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 12 | Կարևորել աշակերտակենտրոն ուսուցումը: Դասավանդման ընթացքում կիրառել ուսուցման փոխներգործուն և համագործակցային մեթոդներ, որոնց զուգորդումը յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն է ընձեռնում բացահայտելու սեփական ընդունակություններն ու նախասիրությունները: Հայտնաբերել օժտված սովորողներին, տալ առարկայական խորը և կայուն գիտելիքներ:<br>Ապահովել սովորողների մասնակցությունը <<Մեղու>>«<<Կենգուրու>>, <<Медвежонок>> և կրթաուսուցողական այլ միջոցառում- մրցույթներին: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 13 | Յուրաքանչյուր կիսամյակում անցկացնել «Բաց դռների օր: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 14 | Վերահսկել թեմատիկ, նախագծային(նախատեսված լինելու դեպքում) գրավոր աշխատանքների | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի |

| | | | |
|---|---|---|---|
| | կատարումը, քանակը, ստուգման որակը, բարդության աստիճանը,գնահատման անաչառությունը: Վերահսկվել գործնական աշխատանքների կատարումը, քանակը, ստուգման որակը և անաչառությունը: Կատարել արդյունքների վերլուծություն: | | տեղակալ |
| 15 | Իրականացնել հսկողություն չառաջադիմող աշակերտների նկատմամբ: Ամիսը 1 անգամ դասղեկներից տեղեկատվություն ստանալ վատ սովորողների առաջադիմության մասին, ուսումնասիրել պատճառները:Հանձնարարել ուսուցչի օգնականին, հոգեբանին ( դասղեկների հետ համագործակցելով) բացահայտել սոցիալական և հոգեբանական խնդիրներ ունեցող աշակերտներին:Կազմակերպել աջակցություն: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 16 | Պարբերաբար ստուգել աշակերտների տետրերի, դասագրքերի առկայությունը: Իրականացնել հսկողություն տետրերի վարման նկատմամբ: | Ուս. տարվա ընթացքում: | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 17 | Հիմնական պարտադիր կրթության իրականցման նպատակով վերահսկել սովորողների ուշացումներն ու անհարգելի բացակայությունները: Դրանք ժամանակին կանխել : Ուշադրության կենտրոնում պահել հաճախակի բացակայող սովորողներին: Կատարել աշակերտների հաճախումների ամենօրյա ստուգում: Ամիսը մեկ անգամ ամփոփվել բացակայությունների քանակը: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 18 | Վերահսկել ուսուցիչների աշխատանքը (հատկապես դասղեկներինը) կիսամյակի վերջում ընդունել դասղեկների հաշվետվությունները: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 19 | Պարբերաբար ստուգել էլ. մատենավարությունը: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |

| | | | |
|---|---|---|---|
| 20 | Հետևողական լինել հատկապես աշակերտների կարգապահության նկատմամբ: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 21 | 1.Պարբերաբար կատարել դասալսումներ, արդյունքները քննարկել,առաջարկությունները և դիտողությունները գրանցել ուսուցիչների աշխատանքային գործունեությունը բնութագրող գրանցամատյանում:<br>Դասալսումներ՝ տարաբնույթ և տարանպատակ.<br>ա. նորակազմ դասարաններում՝ հայտորոշիչ բնույթի<br>բ. ատեստավորման ենթակա ուսուցիչների մոտ՝ բնութագրի կազմում,<br>գ. երիտասարդ ուսուցիչների մոտ՝ մեթոդական աջակցություն ,<br>դ. ավարտական դասարաններում՝ քննություններին պատրաստվածության գնահատում:<br>Պարբերաբար ստուգել դասին ուսուցիչների պատրաստվածությունը,խթանել օրվա դասի պլանի գործածումը,բարձրացնել դրանց կիրառական արդյունավետությունը:<br><br>2.Մասնակցել առաջավոր փորձի դասերին :<br>Կատարել ուսուցիչների փոխադարձ դասալսումների տետրերի ամենամսյա ստուգում:<br>Կազմակերպել առարկայական միամսյակներ՝ այդ շրջանակներում՝ առաջավոր փորձի դասեր և միջոցառումներ՝<br>հումանիտար մասնախումբ՝ մարտ<br>բնագիտական- ապրիլ<br>դասվարական-մայիս<br>Առանձնահատուկ ուշադրություն դարձնել <<Առողջ ապրելակերպ >> առարկայի դասավանդմանը 8-9-րդ | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |

| | | | |
|---|---|---|---|
| | դասարաններում: | | |
| 22 | Աջակցել դպրոցի մանկավարժական աշխատողների մասնագիտական շարունակական զարգացմանը: Վերապատրաստման կարիք ունեցող մանկավարժների ցանկի հստակեցում և նրանց իրազեկում ըստ սահմանված կարգի: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 23 | Աջակցել սովորողների կրթական, սոցիալական, առողջապահական շահերի և իրավունքների պահպանմանը: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 24 | Ղեկավարել տարրական ուսուցման մեթոդիկայի և բնագիտամաթեմատիկական մասնախմբերիի աշխատանքները, ընդհանրացնել և տարածել մանկավարժական աշխատանքի արդյունավետ փորձը, աջակցել ուսուցման նոր մեթոդների ներդրմանը, ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժական նորագույն նվաճումներին: Կարևորել անհատական մոտեցումները, շերտավորված ուսուցումը: Կազմակերպել օգնություն սկսնակ ուսուցիչներին: Կատարել արդյունքների վերլուծություն: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 25 | Մասնախմբերում յուրաքանչյուր ամիս գումարել հերթական նիստ (նաև արտահերթ նիստեր), որոնք համապատասխանաբար կարձանագրվեն: Կատարել մասնագիտական մեթոդական խորհրդատվություններ և ընթերցել մեթոդական զեկուցումներ : Կատարել քննարկումների վերլուծություններ: Մասնակցություն կրթության զարգացման և նորարարությունների ազգային հիմնադրամի (ԿԶՆԱԿ) կողմից կազմակերպված գործընթացներին ու դրանց մասսայականացում: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |

| | | | |
|---|---|---|---|
| 26 | Ստեղծել սերտ կապեր մասնագիտական հաստատությունների հետ, կազմակերպել հանդիպումներ տարբեր մասնագետների հետ: | Ուս. տարվա ընթացքում | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 27 | Առարկայական օլիմպիադաների դպրոցական կազմկոմիտեի կազմում և նիստերի գումարում,խրախուսումների առաջադրում:<br>Դպրոցականների առարկայական օլիմպիադաների նախապատրաստում և իրականացում, դրանց արդյունքների ամփոփում և քննարկումներ մանկխորհում, մասնախմբերում, աշակերտական և ծնողական խորհուրդներում:<br>ա. դպրոցական փուլ<br>բ. տարածաշրջանային փուլ<br>գ. մարզային փուլ<br>դ. հանրապետական փուլ | Նոյեմբեր-դեկտեմբեր | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 28 | Սովորողների գիտելիքների մակարդակը ստուգելու նպատակով անցկացնել **գրավոր աշխատանքներ** տնօրենության կողմից երկրորդ կիսամյակում՝<br>4-րդ դասարան- հարցարան/ մայրենի, մաթեմատիկա/<br>9-րդ դասարան- հարցարան/ հայոց լեզու, մաթեմատիկա, բնագիտական առարկաներ/<br>3,5,6,7,8-րդ դասարաններ-թելադրություն/մայրենի/,<br>**բանավոր հարցումներ** /նախաքննական ստուգում /հետևյալ առարկաներից՝<br>գրականություն<br>պատմություն<br>օտար լեզու<br>2022-2023 ուստարվա / ըստ քննական առարկաների/ աշակերտների պետական ավարտական քննությունների ցուցակների կազմում և դրանց | փետրվար, մարտ, ապրիլ | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |

| | | | |
|---|---|---|---|
| | առաքում էլեկտրոնային փոստով:<br>Պետական ավարտական քննությունների ցուցակների ճշգրտում, փոփոխություններ կամ հաստատում: | | |
| 30 | 120-200 ժ բացակայություն ունեցող աշակերտների համար կազմել քննությունների, ամփոփիչ աշխատանքների առաջադրանքներ և ներկայացնել տնօրենի հաստատմանը:<br>Սահմանված ժամաքանակից ավել դասաժամ բացակայած աշակերտների հաշվառում,ցանկի ներկայացում մանկխորհին, փաստաթղթերի կազմում,քննությունների և ստուգարքների կազմակերպում և անցկացում ,ծնողների իրազեկում, աշխատանք էլեկտրոնային մատյաններով : | մայիս | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 31 | Թեմատիկ պլանի և Էլ. դասամատյանի դասի բովանդակության համապատասխանության ստուգում:<br>Առարկայական ծրագրերի կատարման ստուգում:<br>Արդյունքների վերլուծություն: | Դեկտեմբեր, մայիս | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |
| 32 | 2022-2023 ուստարվա փոխադրման, ավարտման և քննական կարգի մասսայականացում ուսուցիչների, աշակերտների և ծնողների շրջանում:<br>քննությունների և նախաքննական խորհրդատվությունների աշխատակարգի և ժամանակացույցի կազմում:<br>քննող և ստուգող հանձնաժողովների, կազմակերպիչների ու հերթապահների նախնական ցանկի կազմում,<br>քննական կենտրոնի և քննասենյակների կահավորում,<br>9- րդ դասարանում պետական ավարտական | Մայիս | Ուսումնական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ |

| | | | |
|---|---|---|---|
| | քննությունների կազմակերպում և անցկացում, դրանց արդյունքների ամփոփում և փոխանցում ԳԹԿ կայքում:<br>Ավարտական փաստաթղթերի լրացման համար անհրաժեշտ ձևաթղթերի նախապատրաստում և դրանց լրացում:<br>2022-2023 ուստարվա հենքային ուսպլանի ծանոթացում, նախնական կոմպլեկտավորում և դասաբաշխում ըստ գալիք տարվա դպրոցի ուսպլանի նախագծի | | |
| 33 | Դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի 2021-2022 ուստարվա աշխատանքային գործունեության հաշվետվության կազմում<br>Հաշվի առնելով ուստարվա ընթացքում ցուցաբերած արդյունքները՝ տարեվերջին ըստ տարիքային խմբերի պարգևատրել լավագույն դասարաններին՝ նշված անվանակարգերով.<br>1.«Ուսման առաջավորներ<br>2.«Ամենաակտիվներ<br>3.«Ստեղծագործողներ<br>4.«Ամենակոկիկներ<br>5.«Ամենասպորտայիններ<br>6.«Ամենանախաձեռնող»ր | | Տնօրեն,ուսումն ական աշխաանքների գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ |

**Ուսումնական աշխատանքերի գծով տնօրենի տեղակալ՝ _______________Լ. Պողոսյան**

**30.08.2022թ.**